

ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայցերի ներկայացում • Տեղեկատվություն վճարման մասին • Ընդհանուր տեղեկություններ

ՈՎ ՊԵՏՔ Է ՀԱՅՑ ՆԵՐԿԱՅԱՑՆԻ

Դուք կարող եք հայց ներկայացնել Գործազրկության ապահովագրության (Unemployment Insurance, UI) նպաստների համար, եթե այլևս չեք աշխատում, կամ Ձեր ժամերը կրճատվել են: ՍI նպաստներ ստանալու իրավունք ունենալու համար պետք է գործազուրկ լինեք ոչ սեփական մեղքով և ֆիզիկապես ունակ լինեք աշխատելու, պատրաստ լինեք աշխատանք ընդունելու և փնտրեք աշխատանք:

ԵՐԲ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ ՀԱՅՑԸ

Դուք պետք է նպաստների համար դիմեք, հենց որ դառնում եք գործազուրկ, կամ Ձեր ժամերը կրճատվում են: Ձեր հայցը կգրանցվի կամ կվերաբացվի այն շաբաթվա կիրակի օրը, որում ներկայացրել եք հայցը: Բոլոր հայցերն ունեն մեկ շաբաթվա անվճար սպասման ժամանակաշրջան: Մպասման ժամանակաշրջանը չի սկսվում, քանի դեռ հայցը չի գրանցվել:

ԻՆՉ Է ՀԱՐԿԱՎՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ

Նպաստներ ստանալու Ձեր իրավունակությունը որոշելու համար Ձեզ կտրվեն մի շարք հարցեր, օրինակ՝ տեղեկություններ Ձեր նախկին գործատուների և չաշխատելու պատճառի մասին: Ձեր հայցի հնարավորինս շուտ գրանցումն ապահովելու համար պետք է հայցը ներկայացնելուց առաջ պատրաստի ունենաք հետևյալ տեղեկությունները

- Ձեր սոցիալական ապահովության քարտի համարը, անունը (ներառյալ բոլոր անունները, որոնք օգտագործել եք աշխատելու ժամանակաշրջանում), ծննդյան թվականը, փոստային և բնակության հասցեն (ներառյալ փոստային ինդեքսը) և հեռախոսահամարը (ներառյալ տարածաշրջանային կոդը).
- Ձեր վարորդական իրավունքի վկայականը կամ ինքնության քարտի համարը.
- որևէ գործատուի մոտ աշխատելու վերջին օրվա թվականը.
- տեղեկություններ վերջին գործատուի մասին, ներառյալ ձեռնարկության կամ ընկերության անվանումը, որտեղ վերջին անգամ ֆիզիկապես աշխատել եք, հասցեն (փոստային և փաստացի գտնվելու վայրը) և հեռախոսահամարը. անհրաժեշտ է մեզ տրամադրել նաև երկու հասցեների փոստային ինդեքսները և գործատուի հեռախոսահամարի տարածաշրջանային կոդը.
- պատճառը, թե ինչու այլևս չեք աշխատում Ձեր վերջին գործատուի մոտ, և Ձեր վերադասի անունը.
- տեղեկություններ բոլոր գործատուների մասին, ում մոտ աշխատել եք Ձեր հայցը ներկայացնելուն նախորդող 18 ամսվա ընթացքում, ներառյալ նրանց անունները, հասցեները, աշխատելու ժամանակաշրջանը, վաստակած աշխատավարձերը և վճարման կարգը.
- Ձեր «DD214 Անդամի պատճեն 4» (DD214 Member Copy 4) ձևից վերցված տվյալներ, եթե վերջին 18 ամսվա ընթացքում ծառայել եք Ձինված ուժերում.
- Ձեր «Գործազրկության ապահովագրության մասին ծանուցագիր դաշնային ծառայողներին» ստանդարտ ձև 8-ից (Standard Form 8, "Notice to Federal Employees About Unemployment Insurance") վերցված տեղեկություններ, եթե վերջին 18 ամսվա ընթացքում աշխատել եք դաշնային կառավարության գործակալությունում.
- Ձեր օտարերկրացու գրանցման համարն ու գործողության ավարտի ժամկետը, եթե Դուք ԱՄՆ քաղաքացի չեք:

ԻՆՉՊԵՍ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ ԿԱՄ ՎԵՐԱԲԱՑԵԼ ՀԱՅՑԸ

ԱՌՑԱՆՑ

ՍI-ի համար դիմելու կամ Ձեր հայցը վերաբացելու համար օգտվեք eApply4UI-ից: Այն հասանելի է առցանց օրը 24 ժամ, շաբաթը յոթ օր և մատչելի է անգլերեն կամ իսպաներեն լեզվով: Դա ՍI-ի համար դիմելու կամ Ձեր հայցը վերաբացելու ապահով, հուսալի և ամենաարագ միջոցն է:



ՀԵՌԱՆՈՍՈՎ

Ձեր հայցը ներկայացնելու կամ վերաբացելու համար զանգահարեք և խոսեք Զբաղվածության զարգացման վարչության (Employment Development Department, EDD) հաճախորդների սպասարկման ծառայության ներկայացուցչի հետ: Կարող եք զանգահարել անվճար համարներից որևէ մեկով՝ ԱՄՆ-ի ցանկացած վայրից, առավոտյան ժամը 8-ից մինչև կեսօրվա 12-ը (Ստանդարտ խաղաղօվկիանոսյան ժամանակ), երկուշաբթիից ուրբաթ, բացի ոչ աշխատանքային օրերից

անգլերեն 1-800-300-5616
իսպաներեն 1-800-326-8937
կանտոններեն 1-800-547-3506

մանդարին չինարեն 1-866-303-0706
վիետնամերեն 1-800-547-2058
TTY (ոչ ձայնային) 1-800-815-9387

ՈՐՆ Է ՀԱՋՈՐԴ ՔԱՅԼԸ

Ձեր հայրը ներկայացնելուց հետո սպասեք 10 օր մշակման համար: Եթե փոստով ծանուցում չստանաք 10 օր անց, գանգահարեք կամ դիմեք մեզ՝ Ձեր հարցումը ներկայացնելով առցանց www.edd.ca.gov/Unemployment, և էլեկտրոնային փոստով ուղարկեք Ձեր հարցերը՝ «Ընդհանուր տեղեկություններ» բաժնում ընտրելով «Դիմեք մեզ»:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՎՃԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ձեր կատարած վերջին ՍՈՒ վճարման կարգավիճակն իմանալու համար գանգահարեք EDD-ի՝ ստորև տրված անվճար Ավտոմատ ինքնասպասարկման հեռախոսահամարով: Վճարման տվյալներին ծանոթանալու հնարավորություն ստանալու համար անհրաժեշտ են Ձեր սոցիալական ապահովության քարտի համարը (Social Security number) և 4-անիշ անձնական նույնականացման համարը (Personal Identification Number, PIN): Ավտոմատ ինքնասպասարկման հեռախոսահամարը տալիս է քայլ առ քայլ ցուցումներ, թե ինչպես ստեղծել PIN-ը, որպեսզի կարողանաք մուտք գործել դեպի Ձեր գաղտնի ՍՈՒ հայցի տվյալները: Ավտոմատ ինքնասպասարկումը նաև կուղորդի դեպի այլ ծառայություններ, որոնք գուցե Ձեզ հարկավոր լինեն:

Ավտոմատ ինքնասպասարկում (անզերեն և իսպաներեն) 1-866-333-4606

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՃԱՆ ՏՐՎՈՂ ՀԱՐՅԵՐ

Որքա՞ն է ՍՈՒ վճարը:

Շաբաթական նպաստների գումարները տատանվում են նվազագույնը \$40-ից մինչև առավելագույնը \$450՝ Ձեր անցյալ եռամսյակային վաստակներից կախված:

Ե՞րբ է հաճախորդների սպասարկման ծառայության ներկայացուցչին զանգելու լավագույն ժամանակը:

Ձեր սպասման ժամանակը նվազեցնելու համար խուսափեք զանգահարել ամենաշատ ծանրաբեռնված ժամերին՝ երկուշաբթի օրերին, ոչ աշխատանքային օրերին հաջորդող օրը և առավոտյան 8-ից մինչև 8:30: Մեր ամենաքիչ զբաղված օրերն են չորեքշաբթի և հինգշաբթի օրերը:

Ինչո՞ւ են ինձ օր և ժամ նշանակում հեռախոսային հարցազրույցի համար:

Եթե հարցեր լինեն նպաստներ ստանալու Ձեր իրավունակության վերաբերյալ, ապա լրացուցիչ տեղեկություններ կպահանջվեն Ձեզնից, և Դուք փոստով ծանուցում կստանաք նշանակված հեռախոսային հարցազրույցի մասին: Օրինակ՝ Ձեզ հեռախոսային հարցազրույցի օր ու ժամ կնշանակվի, եթե դուրս գաք Ձեր վերջին աշխատանքից, եթե ազատվեք Ձեր վերջին աշխատանքից, եթե ունակ կամ հասանելի չեք աշխատանքի համար, եթե աշխատանք չեք փնտրում: Կարևոր է ուսումնասիրել ծանուցման մեջ տրված տեղեկությունները, ինչը Ձեզ կօգնի նախապատրաստվել հարցազրույցին:

ԱՅԼ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

EDD-ն տրամադրում է աշխատանքի տեղավորման ու վերապատրաստման ծառայությունների լայն սպեկտր՝ համագործակցելով նահանգային և տեղական գործակալությունների ու կազմակերպությունների հետ: Այդ ծառայությունները, որոնք մատուցվում են [America's Job Center of California](#)SM-ի միջոցով (նախկինում՝ աշխատանքի տեղավորման միասնական կենտրոններ (One-Stop Career Centers)) օգտակար են աշխատանք փնտրողների, աշխատանքից ժամանակավորապես ազատվածների, երիտասարդների, վետերանների և հաշմանդամների համար: Այս բոլոր անվճար ռեսուրսները տրամադրվում են աշխատանքի որոնման հաջող իրականացումն ապահովելու համար:

[America's Job Center of California](#)SM ծառայությունն առաջարկում է՝

- աշխատանքի որոնման օգնություն
- [CalJOBS](#)SM-ի տրամադրած թափուր աշխատատեղերի ցուցակներ
- հեռախոսներից, ինտերնետից, տպիչներից, հեռապատճենահանման ապարատներից և պատճենահանման ապարատներից օգտվելու հնարավորություն
- գործնական պարապմունքներ
- տեղեկատվություն աշխատավարձերի և միտումների մասին
- համայնքային ռեսուրսներ
- ուղղորդումներ դեպի այլ ծառայություններ և այլն

[America's Job Center of California](#)SM ծառայության ամենամոտիկ տեղական գրասենյակի գտնվելու վայրն իմանալու համար գանգահարեք Ամերիկայի աշխատուժի ցանցի (America's Workforce Network) Անվճար օգնության գիծ՝ 1-877-US 2 JOBS (1-877-872-5627), կամ այցելեք www.servicelocator.org կայքը՝ Ձեր տեղական համայնքում մատչելի ծառայությունների մասին տեղեկատվություն ստանալու համար: Տեղեկատվությունը հասանելի է 140-ից ավելի լեզուներով, իսկ թույլ լսողություն ունեցող անձանց համար գործում է հեռատիպ (TTY):